

**5.4. 2010 թվականի ապրիլ ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2010թ. ապրիլին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** 2010թ. ապրիլին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 12 մշտական լաբորատոր դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան, Սևան, Կապան և Քաջարան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 175 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված 1-ական ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 41783 փորձանմուշ:

**Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների, դիտակետերի, ավտոմատ կայանների և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունն ըստ քաղաքների և Ամբերդ գյուղի, 2010թ. ապրիլ**

(միավոր)

	Դիտակայանների		Դիտակետերի		Ավտոմատ կայանների	
	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը
ք.Երևան	4	990	17	119	1	20266
ք.Արարատ	1	72	-	-	-	-
ք.Ալավերդի	2	100	18	123	1	11307
ք.Վանաձոր	3	800	24	182	-	-
ք.Գյումրի	1	24	24	189	-	-
ք.Հրազդան	1	75	12	94	-	-
ք.Ծաղկաձոր	-	-	14	111	1	6547
ք.Վաղարշապատ	-	-	16	95	-	-
ք.Աբովյան	-	-	12	72	-	-
ք.Սևան	-	-	10	17	-	-
ք.Կապան	-	-	20	38	-	-
ք.Քաջարան	-	-	8	15	-	-
գ.Ամբերդ	-	-	-	-	1	547
<b>Ընդամենը</b>	<b>12</b>	<b>2061</b>	<b>175</b>	<b>1055</b>	<b>4</b>	<b>38667</b>

Երևան քաղաքի մթնոլորտային օդում մարտ ամսվա համեմատ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.2 անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ) ք.Երևանի մթնոլորտային օդում, 2010թ. ապրիլ**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՄԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	0.68	0.10	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.09	0.03	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.425	0.120	0.085	0.04
Գետնամերձ օզոն	0.080	0.057	0.16	0.03
Բենզոլ	0.270	0.011	1.5	0.1
Տոլուոլ	0.017	0.003	0.6	0.6
Քսիլոլներ	0.113	0.010	0.2	0.2
Ածխածնի մոնօքսիդ	-	0.88	5	3

Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 9484, ծծմբի երկօքսիդի համար՝ 9560, ազոտի օքսիդների համար՝ 1222 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում ածխածնի մոնոօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 3.4 անգամ:

**Գյումրի քաղաքի** մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ: Մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.4 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 4.8 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 5.4 անգամ:

**Վանաձոր քաղաքի** մթնոլորտային օդում մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները բարձրացել՝ 1.2-ական անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՄԹԿ-ները ք.Վանաձորի մթնոլորտային օդում, 2010թ. ապրիլ**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՄԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.23	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.84	0.16	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.2871	0.050	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.03	0.05	0.40	0.06

Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Հրազդան քաղաքի** մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 1.2 անգամ: Մարտ ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 4.0 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 4.8 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 6.7 անգամ:

**Ալավերդի քաղաքի** դիտակայաններում դիտարկումներ կատարվել են միայն մթնոլորտային օդում փոշու պարունակության որոշման համար: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4856, ծծմբի երկօքսիդի համար՝ 4862, ազոտի օքսիդների համար՝ 794, գետնամերձ օդոնի համար՝ 795 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին

ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը ՄԹԿ-ից ցածր է եղել 5.0 անգամ, ազոտի օքսիդինը՝ 2.4 անգամ, գետնամերձ օզոնինը՝ 2.1 անգամ:

**Արարատ քաղաքի** մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 2.0 անգամ: Մարտ ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 3.0 անգամ:

**Ծաղկաձոր քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 8.3 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 17.4 անգամ: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 2113, ծծմբի երկօքսիդի համար՝ 3129, ազոտի օքսիդների համար՝ 779, գետնամերձ օզոնի համար՝ 526 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ածխածնի մոնօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 12.6 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.2 անգամ, ազոտի օքսիդինը՝ 2.7 անգամ:

**Վաղարշապատ քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 4.8 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 4.2 անգամ:

**Աբովյան քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 8.3 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 4.0 անգամ:

**Սևան քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 9.3 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.0 անգամ:

**Կապան քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 12.2 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 7.0 անգամ:

**Քաջարան քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ից ցածր է եղել 15.2 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 4.4 անգամ:

**Ամբերդ գյուղում** ֆոնային կոնցենտրացիաների որոշման նպատակով ավտոմատ եղանակով վերցվել է օդի 90 և փոշու 30 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի որոշման համար անընդմեջ ռեժիմով կատարվել է 427 դիտարկում: Գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը և ամոնիակինը՝ ՄԹԿ-ից ցածր է եղել համապատասխանաբար 15.4 և 33.3 անգամ:

**Սակերևության ջրերի որակի մոնիթորինգ:** Ապրիլին մակերևության ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 39 գետերի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի,

Գեչուտի ջրամբարների, Երևանյան լճի և Սևանա լճի 117 դիտակետերում: Վերցված 126 փորձանմուշներում որոշվել է 22-26-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2010թ. ապրիլ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները				
			ԹԿՊ <sub>5</sub> (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	ԹՔՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ <sup>3</sup> )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ <sup>3</sup> )
Փամբակ	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	-	-	0.674	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	3.3	-	-	-	-
	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	3.8	-	-	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	3.3	-	-	-	-
Ձորագետ	10	Գետաբերան	3.5	-	-	-	-
Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	-	-	0.032	0.480	-
	12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.037	0.775	-
Ախթալա	14	Գետաբերան	3.8	-	-	-	172.2
Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	-	34	-	-	-
Արաքս	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	-	0.029	-	-
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.064	-	-
	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	-	0.049	-	-
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	-	0.050	-	-
Ախուրյան	33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	3.3	-	-	-	-
	34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	3.5	-	-	-	-
Կարկաչուն	38	Գետաբերան	6.3	-	0.167	1.009	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	-	0.046	2.643	246.8
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	-	0.069	0.788	224.5
	42	Ռանչյար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.060	-	190.3
Քասախ	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	-	-	-	1.248	-
Գողարոտ	49	Գետաբերան	-	-	0.041	0.898	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	3.7	-	-	-	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	3.7	-	-	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	3.4	-	0.046	0.640	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	-	-	0.063	4.368	-
	56	Գետաբերան	-	-	0.096	3.324	117.4
Գետառ	59	Գետաբերան	5.1	-	0.158	11.436	-
Չկնազետ	61	Գետաբերան	3.6	-	-	-	-
Մասրիկ	63	Գետաբերան	3.7	-	-	0.702	-
Սոթք	65	Գետաբերան	3.3	-	-	-	-
Կարճաղբյուր	67	Գետաբերան	3.5	-	-	-	-
Մարտունի	72	Գետաբերան	3.4	-	-	-	-
Արգիճի	74	Գետաբերան	3.4	-	-	-	-
Շողվակ	76	Ձորագյուղ գյուղի տարածքում	3.5	-	-	-	-
Գավառագետ	77	Ծաղկավան գյուղից 0.5 կմ վերև	3.6	-	-	-	-
	78	Գետաբերան	4.2	-	0.029	0.419	-
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	0.432	-
Արծվանիկ	96	Գետաբերան	-	-	0.060	-	135.6
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	-	0.166	1.659	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	-	-	0.689	-
Ագատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	3.5	-	-	-	-